Արձանագրություն 3

«ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի հանձնաժողովի բանակցությունների արդյունքների ամփոփման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 06 օգոստոսի 2018թ.
Անցկացման ժամը՝ 11:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Անահիտ Ասատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	Թամարա Հովսեփյան
	Տաթևիկ Շիրինյան
	Հասմիկ Թամրազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

Բացակայում էին հանձնաժողովի անդամներ Արշակ Պետրոսյանը և Հովհաննես Հակոբյանը:

I. Բանակցությունների անցկացման մասին

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան**)**

1.1 N 3 չափաբաժնի մասով գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, հրավիրվել են միաժամանակյա բանակցություններ 06.08.2018թ. ժամը 11:00-ին:

1.2 «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել բանակցությունների:

1.3 Հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	Նախահաշ-վային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկված ընդհանուր գինը, առանց ԱԱՀ-ի
1	2	3	4	5	6	7
Չափաբաժին 1: Գնման առարկա է հանդիսանում՝ Partec Control Blood թեստ-հավաքածու						
-	-	-	-	-	-	-
Չափաբաժին 2: Գնման առարկա է հանդիսանում՝ Ացետոն						
-	-	-	-	-	-	-
Չափաբաժին 3: Գնման առարկա է հանդիսանում՝ Մեզի թեստ ձողիկներ						
1	**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**	**158400**	**100000**	**20000**	**120000**	**100000**
Չափաբաժին 4: Գնման առարկա է հանդիսանում՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ 1) հակառետրովիրուսային դեղերի դեղակայունության որոշման համար թեստ հավաքածու						
1	«Պրոմ-տեստ» ՍՊԸ	7419792	6250000	1250000	7500000	6250000
Չափաբաժին 5: Գնման առարկա է հանդիսանում՝ ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու 1						
1	**«Վիոլա» ՍՊԸ**	**12816000**	**10584000**	**2116800**	**12700800**	**10584000**
2	«Ա.Բ.ՄԵԴ» ՍՊԸ	12816000	18000000	3600000	21600000	18000000

II. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների որոշման և հայտարարման մասին

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան)

2.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հանձնաժողովը որոշեց.

1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝

- N 3 չափաբաժնի համար «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին:
- N 5 չափաբաժնի համար «Վիոլա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2.2 N 1 և N 2 չափաբաժինների մասով գնումը հայտարարել չկայացած՝ մասնակիցների կողմից գնային առաջարկներ ներկայացված չլինելու պատճառով:

N 4 չափաբաժնի մասով գնումը հայտարարել չկայացած, քանի որ մասնակցի կողմից առաջարկված գինը գերազանցում է տվյալ գնման առարկայի համար սահմանված նախահաշվային գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2.3 Ընդունել ի գիտություն, որ

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

- ✓ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- ✓ Ծանուցելու է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

III. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան)

3.1. Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի փաստաթղթերի գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Ասատրյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Թ.Հովսեփյան	_____ (ստորագրություն)
	Տ.Շիրինյան	_____ (ստորագրություն)
	Հ.Թամրազյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)